



Ամսական Տեղեկատու Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան Վարժարանի

2010 Սեպտեմբեր-Ռեկտեմբեր ամիսներու արտադասարանային գործունեութեան

Չորեքշաբթի, 1 Սեպտեմբերին տեղի ունեցաւ Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան վարժարանի վերամուտի հանդիսութիւնը՝ ներկայութեամբ Գերաշնորհ Տէր Պարետ Ծալրագոյն Վարդապետ Երեցեանի, Արժանապատի Տէր Մանուկ Աւագ Քինյ. Մարգարեանի, վարժարանիս բարերարներու, հոգաբարձութեան անդամներու, տնօրէնին, ուսուցիչներու եւ ծնողներու:



Հոգաբարձութեան ատենապետ Պրն. Գեորգ Մանտոսեան իր խօսքը կ'ուղղէ ներկաներուն:

Աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ եւ հիւրեր կը հետեւին բացման արարողութեան:

Հինգշաբթի, 9 Սեպտեմբերին վարժարանիս սրահին մէջ տեղի ունեցաւ վերադարձ դպրոց երեկոն (Back to School Night): Երեկոյեան ժամը 7:30-ին, տնօրէնութիւն, հոգաբարձութեան ներկայացուցիչներ, ծնողներ եւ ուսուցիչներ հաւաքուած էին լսելու վարժարանի նոր ուսումնական տարեշրջանին վերաբերող հարցերու մասին: Քննարկումին գլխատր առանցքը աշակերտներուն ուսումնակրթական յառաջդիմութիւնն էր: Տնօրէնին տուած տեղեկութիւններէն ետք, ծնողները դասարաններուն մէջ առանձին հանդիպումներ ունեցան դաստիարակ ուսուցիչներուն հետ:



Տնօրէն Պրն. Վարդգէս Գուրոտեան իր խօսքը արտասանած պահուն:

Ուսուցիչներ կը խորհրդակցին ծնողներու հետ...

Ուրբաթ, 11 Սեպտեմբերին, Գարապեան սրահին մեջ տեղի ունեցավ գնահատագիրներու յանձնում ուսման մեջ յառաջադեմ, ինչպէս նաեւ իրենց վարքով օրինակելի աշակերտներուն: Տարբեր նիւթերու մեջ բարձր նիշեր ստացած աշակերտներ իրենց ուսուցիչներու ձեռամբ արժանացան մրցանակներու:



50-է աւելի աշակերտներ կ'արժանանան գնահատականներու եւ մրցանակներու. աջին՝ տնօրէն Պրն. Վարդգէս Գուրուեան:

Հինգշաբթի, 16 Սեպտեմբերէնէն Երեքշաբթի, 21 Սեպտեմբեր երկարող օրերուն տեղի ունեցավ վարժարանիս 2010-2011 ուսումնական տարուան Ոսանողական Խորհուրդի ընտրապայքարը եւ ապա՝ ընտրութիւնները: Աշակերտները ընտրապայքարը վերածեր էին գեղարուեստական հանդէսի: Ընտրապայքարի մասնակիցները արտասանեցին իրենց խօսքերը եւ պաշտպանեցին իրենց ծրագիրները: Տեղի ունեցավ արդար քուէարկութիւն, որուն մասնակցեցան բոլոր դասարաններուն աշակերտները: Սեպտեմբեր 21-ին, Ոսանողական Խորհուրդի անդամ ընտրուեցան 11-րդ դասարանի աշակերտներ՝

Մորիս Սարաֆեան՝ նախագահ
Յարութ Սերոբեան՝ փոխ նախագահ
Լիլիթ Աղազարեան՝ քարտուղար
Յովհաննէս Սուփիկեան՝ փոխ քարտուղար
Մարիա Դուկասեան՝ գանձապահ
Լուսինէ Աղեկեան՝ փոխ գանձապահ



Նորընտիր անդամներ Լուսինէ Աղեկեան, Յարութ Սերոբեան, Լիլիթ Աղազարեան, Մորիս Սարաֆեան, Մարիա Դուկասեան եւ Յովհաննէս Սուփիկեան:

Ուրբաթ, 1 Հոկտեմբերին վարժարան այցելութիւն տուաւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Հոգեշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեան, ընկերակցութեամբ հոգեւոր հովիւ Տէր Մանուկ Աւագ քին. Մարգարեանի եւ Առաջնորդարանի Երիտասարդականի պատասխանատու Տէր Աւետիս քին. Աբովեանի. հանդիպումին ներկայ էր նաեւ վարժարանիս հոգաբարձութեան ատենապետը՝ Պրն. Գէորգ Մանտոսեանը: Առաջնորդ սրբազանը իր հայրական պատգամը տուաւ աշակերտներուն: Յետոյ Առաջնորդ սրբազանը եւ Տէր Աւետիս քին. մտերմիկ զրոյց ունեցան իրենց շուրջբոլորը խումբ առ խումբ հաւաքուած աշակերտներուն հետ:



Աշակերտներ՝ խմբուած Առաջնորդ սրբազանին (ձախի նկար) եւ Տէր Մանուկին շուրջ (աջի նկար)

Կիրակի, 3 Հոկտեմբերին մեծ աշխուժութիւն կը տիրէր դպրոցին շրջափակէն ներս: Արդ, Ծնողաուսուցչական Յանձնախումբին կազմակերպած տարեկան զբօսախնձոյքը (brunch) վարժարան կանչէր էր բազմաթիւ ծնողներ, բարեկամներ, ուսուցիչներ եւ, ի հարկէ, աշակերտներ: Անոնք ամբողջ օրը ընտանեկան ջերմ մթնոլորտի մը մէջ վայելեցին օրուան յատուկ ճաշերը, խաղերը եւ կիրակնօրեայ մթնոլորտը: Մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին կազմակերպուած մարզական խաղերն ու մրցումները: Ներկաները մինչեւ իրիկուն անմոռանալի յուշերով օր մը եւս անցուցին իրենց սիրելի վարժարանին մէջ:



Հանդիսականներ կը հետեւին խաղերուն ...

Ծնողաուսուցչականի ժրաջան տիկիները ...

Ուրբաթ, 8 Հոկտեմբերին վարժարան այցելեց ԹՄՄ Կեդրոնական Վարչութեան նախկին գանձապահ Պրն. Պետրոս Փիանտարեան: Ան դասարան առ դասարան ծանօթացաւ աշակերտներուն եւ իր բարի խորհուրդներով ոգևորեց աշակերտները՝ իրենց բոլոր կարելիութիւններով օգտակար ըլլան հայութեան, դառնան արժանատի հայեր՝ գիտակ իրենց անցեալին, մշակոյթին, պատմութեան եւ նուիրեն իրենց հնարատրութիւնները հայապահպանումին:

Նկարին մէջ ձախէն՝ վարժարանիս հաշուապահ Պրն. Յակոբ Փիանտարեան, ԹՄՄ Կեդրոնական Վարչութեան նախկին գանձապահ Պրն. Պետրոս Փիանտարեան եւ տնօրէն Պրն. Վարդգէ Գուրուեան:



Երկուշաբթի, 11 Հոկտեմբերին, մինչ աշակերտութիւնը կը տօնէր “Բոլոմպոսի Օրը”, վարժարանիս ուսուցիչները հաւաքուիւ էին գրադարանը, ուր տնօրէնութիւնը կազմակերպէր էր ուսուցիչներուն յատուկ վերապատրաստման սեմինար: Յայտագրին մասնակցեցան վարժարանիս բոլոր ուսուցիչները: Մանկավարժական մասնատր կարեւորութիւն ներկայացնող նիւթերով հանդէս եկան Կրթական Յանձնախումբի ատենապետուհի Տիկ. Արփի Աւանէսեան-Իտողըր եւ Տիկ. Լուսինէ Ասատրեան:



Տիկ. Արփի Աւանէսեան-Իտողըր (ձախի նկար) եւ Տիկ. Լուսինէ Ասատրեան (աջի նկար)

Ուսուցիչները հետաքրքրութեամբ կը հետեւին ...

Հինգշաբթի, 21 Հոկտեմբերին վարժարան այցելեց Թեքեան Մշակութային Միության ատենապետ Պրն. Երուանդ Ազատեան, ընկերակցութեամբ Գեր. հայր Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի: Յարգելի հիւրերը, ընկերակցութեամբ վարժարանիս հոգաբարձութեան ատենապետ Պրն. Գէորգ Մանտոսեանին եւ տնօրէն Պրն. Վարդգէս Գուրուեանին, այցելեցին դասարանները եւ ծանօթացան աշակերտներուն ու անոնց դպրոցական առօրեային:



Հայ գրականութեան դասին, 10-րդ դասարանի աշակերտներուն հետ. ոտքի ձախէն՝ տնօրէն Պրն. Վարդգէս Գուրուեան, Հայր Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, Պրն. Երուանդ Ազատեան եւ Պրն. Գէորգ Մանտոսեան:

Ուրբաթ, 22 Հոկտեմբերին նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտները Գարապեան սրահին մէջ շուրջ տօնեցին Թարգմանչաց օրը: Յատուկ պատրաստուած յայտագիրով արտասանեցին, երգեցին եւ ներկայացուցին Գիրերու Գիւտէն եւ Ոսկեդարէն սկիզբ առած թարգմանչական գործի կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը: Յայտագիրը պատրաստելին հայերէնի ուսուցիչուհիներ՝ Տիկ. Ալիս Գուրուեան, Տիկ. Էմմա Ումրոյեան եւ Օրդ. Ալվարդ Ուզունեան: Յայտագիրին մասնակցեցաւ նաեւ աշակերտական երգչախումբը՝ Պրն. Կոմիտաս Քէշիշեանի ղեկավարութեամբ, որ ոգետրեց ներկաները:



Թարգմանիչներուն նուիրուած խմբային արտասանութեան պահուն:



Աշակերտները հետաքրքրութեամբ կը հետեւին յայտագրին:

Հոկտեմբեր ամսուան վերջին շաբաթը նուիրուած էր վարժարանիս գրադարանին մէջ կազմակերպուած Scholastic Book Fair գիրքերու ցուցահանդէս-վաճառքին: Ուսուցչուհի Տիկ. Էմմա Ումրոյեանի ղեկավարութեամբ եւ հսկողութեամբ, մանկապարտէզէն մինչեւ 6-րդ դասարանի աշակերտները հետաքրքրութեամբ հետեւեցան ցուցահանդէսին՝ ծանօթանալով գիրքնք հետաքրքրող գիրքերու եւ նիւթերու, նաեւ գնելով իրենց անհրաժեշտ բազմաթիւ գիրքեր ու հրատարակութիւններ:



Տեսարաններ ցուցահանդէս-վաճառքէն... Վերը ձախի նկարին մէջ պատասխանատու ուսուցչուհիներ՝ Տիկ. Լ. Ասատրեան, Է. Ումրոյեան եւ կամատոր օժանդակող ծնողներէն՝ Տիկ. Լուսինէ Մելիքեան. վերը աջի նկարին մէջ Պրն. Ժոզէֆ Բասթիյօ եւ միջնակարգի աշակերտներէն խումբ մը:

Երեքշաբթի, 26 Հոկտեմբերին, տնօրէնութեան կազմակերպութեամբ, վարժարանիս արտադասարանային աշխատանքները համադրելու, ինչպէս նաեւ երկուքին միջեւ համագործակցութիւնը սերտացնելու նպատակով, ուսուցչարանին մէջ գործնական հանդիպում-խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ Մարզական Յանձնախումբին եւ ուսուցչական կազմին հետ: Բննարկութեան Մարզական Յանձնախումբի գործունէութեան այն միջոցներն ու աշխատանքները, զորս կարելի է որդեգրել վարժարանիս մարզական կեանքը աւելի աշխուժացնելու նպատակով՝ առանց խանգարելու աշակերտներուն ուսումնակրթական ծրագիրին:



Կեդրոնը ձախէն՝ Մարզական Յանձնախումբի նիւթական հարցերու պատասխանատու՝ Պրն. Մեդրակ Շիշիկեան եւ յանձնախումբի ատենապետ Պրն. Յակոբ Մազլումեան կը խորհրդակցին ուսուցիչներուն հետ:

Հինգշաբթի, 28 Հոկտեմբերին վարժարանիս աշակերտները սաստօնեցին Halloween-ը: Առտուան ժամերէն մանկապարտեզէն մինչեւ միջնակարգի աշակերտները այցելեցին սարսափի սրահը, որ պատրաստեր էին 11-րդ դասարանի աշակերտները: Աշակերտները, դասարան առ դասարան, բեմ ելան Halloween-ի իրենց տարազները ցուցադրելու: Յաղթականներուն տրուեցան յատուկ նուէրներ: Իսկ երեկոյեան ժամը 7:30-էն սկսաւ բարձր դասարաններուն Halloween-ի երեկոյթը: Ճոխ սեղաններու շուրջ անոնք անցուցին ուրախ ժամանակ:



Աշակերտները խանդավառութեամբ բեմին վրայ կը ցուցադրեն իրենց տարազները:



Ուրբաթ, 5 Նոյեմբերին Ծնողաուսուցչական կազմակերպութիւնը վարժարանիս հիմնադրութեան 30-ամեակին կապակցութեամբ վարժարանի շրջանաւարտները հրաւիրեր էր “Տաղեան Մշակութային Կեդրոն” հանդիպումի մը: Առաջին անգամ ըլլալով մօտ 350 շրջանաւարտներ հաւաքուեր էին իրարու քով:



Ներկաները՝ հոգաբարձուներ, տնօրէնութիւն, ուսուցիչներ եւ շրջանաւարտներ կը վայելեն ուրախ երեկոն..

Չորեքշաբթի, 10 Նոյեմբերին, վարժարանիս ուսանողութիւնը մէկ մարմին դարձած, մեծ ոգեւորութեամբ շնորհաւորեցին կէսօրուան ճաշի պատասխանատու կամաւոր ծնողներէն իրենց շատ սիրելի Տիկ. Չարուհի Սուլեանին (Չարիկ մորաքի) ծննդեան տարեդարձը: Մենք ալ կը միանանք աշակերտներուն՝ երջանիկ տարիներ, Տիկ. Սուլեան, ձեռքերնիդ միշտ դալար:



Ուրբաթ, 19 Նոյեմբերին, վարժարանի Գարապեան սրահին մէջ, վարժարանի բարերար Պրն. Ուայթեր Գարապեան 12-րդ դասարանի աշակերտները հրաւիրել էր ճաշի սեղանի շուրջ մտերմիկ գրոյցի մը, որուն ներկայ էր նաեւ վարժարանի Հոգաբարձութեան Ատենապետ Պրն. Գեորգ Մանտոսեան: Պրն. Գարապեան ծանօթացաւ աւարտական աշակերտներուն եւ անոնց ձեռք բերած գիտելիքներուն՝ անոնց 12-ամեայ ուսումնառութեան աւարտին, հանդիպումը նաեւ առիթ եղաւ, որ աշակերտները աւելի յանգամանալից ճանչնան բարերարը: Հաճելի մթնոլորտի մէջ անցած հանդիպումը շատ օգտակար եղաւ երկուքին՝ ե՛ւ Պրն. Գարապեանին, ե՛ւ յատկապէս աշակերտներուն համար:



Կեդրոնը ձախէն Պրն. Ուայթեր Գարապեան, քովը՝ Պրն. Գեորգ Մանտոսեան կը գրուցեն աշակերտներուն հետ:

Շաբաթ, 20 Նոյեմբերին Արշակ Տիգրանեան վարժարանի Գոհաբանութեան ճաշկերոյթ-պարահանդէսն էր: Ծնողատուօցչական անձնակազմը, վարժարանի հոգաբարձուները, աշակերտներն ու ծնողները հաւաքուած կը վայելէին ընտանեկան ջերմ մթնոլորտ մը: Տիկ. Էմմա Ումրոյեան, Պրն. Կոմիտաս Քէշիշեան եւ Պրն. Ռուդիկ Առաքելեան գեղարուեստական բացառիկ յայտագիր մը կազմակերպել էին: Աշակերտական խորհրդը, ուսուցչական կազմը, Հոգաբարձական եւ Ծնողատուօցչական անձնակազմին ներկայացուցիչներն ու վարժարանի բարեկամներ աշակերտական երգերու, պարերու եւ արտասանութիւններու ճոխ ներկայացումներով հաճելի երեկոյ մը ան-



Նկարներուն մէջ հիւրեր, տնօրէնութիւն եւ հոգաբարձութեան ներկայացուցիչներ հետաքրքրութեամբ կը հետեւին ուրախ յայտագիրին:



ցուցին մինչեւ ուշ ժամեր: Նշենք նաեւ որ, ինչպէս այս, այնպէս ալ այս տարի վարժարանէս ներս կազմակերպուած բոլոր ձեռնարկները պիտի նուիրուին վարժարանի հիմնադրման 30-ամեայ տարեդարձին:

Ծնողատուօցչական կազմակերպութեան տիկիները:

Չորեքշաբթի, 17 Նոյեմբերին LOYOLA Marymount (LMU) համալսարանի ներկայացուցիչ Պրն. Արեգ Խորոզեան այցելեց ԹՄՄ Արշակ Տիգրանեան վարժարան գրուցելու 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտներուն հետ՝ LOYOLA համալսարանին մասին անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցելու եւ աշակերտները քաջալերելու, որ յաճախեն նշեալ համալսարանը՝ թուրքերէն վերջինիս առաւելութիւնները: Յատկապէս 12-րդ դասարանի աւարտականները առիթ ունեցան լսելու զիրենք հետաքրքրող հարցումներուն պատասխանները:



Պրն. Արեգ Խորոզեան բացատրութիւններ կու տայ LMU-ի (LOYOLA Marymount) համալսարանի մասին:

Երկուշաբթի, 22 Նոյեմբերին Հայոց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեանի հրաւերով, աւարտական դասարանի աշակերտները վայելեցին Առաջնորդարան: Առաջնորդութեամբ տնօրէն Պրն. Վարդէս Գուրուեանին եւ իրենց դաստիարակ ուսուցիչին՝ Պրն. Գրիգոր Սուքիասեանին, ուղղուեցան Առաջնորդարան, ուր զիրենք դիմաւորեց Առաջնորդարանի երիտասարդականի պատասխանատուն՝ Տէր Աւետիս քին. Աբովեան, որ աշակերտները հրաւիրեց մօտէն ծանօթանալու նորակառոյց Առաջնորդարանին:



Աշակերտները ծանօթացան Առաջնորդարանի համալիրին, որմէ ետք Առաջնորդ սրբազանը հոգեպարար զրոյց ունեցաւ աշակերտութեան հետ: Յետոյ կարգը հասաւ "ճաշակելու" աւանդութիւն դարձած փիցան, որ իրենց համար անպայման յատուկ համ ու հոտ մը ունի: Աշակերտները եկեղեցական նոր լիցքերով հեռացան Առաջնորդարանէն՝ իրենք զիրենք աւելի մօտիկ եւ հարազատ զգալով Հայ Եկեղեցւոյ:

Նորակառոյց տաճարին Ս. Խորանին առջեւ. Առաջնորդ Սրբազանը եւ Տէր Աւետիս քին. Աջին՝ Պրն. Գրիգոր Սուքիասեան, ձախին՝ Պրն. Վարդէս Գուրուեան:

Չորեքշաբթի, 24 Նոյեմբերի կէսօրին, նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Ծնողաուսուցչական Յանձնախումբին, վարժարանիս Գարապեան սրահին մէջ աշակերտները վայելեցին Գոհաբանութեան ամենահամով հնդկահարը: Համադամ ուտելիքներով ճոխ սեղաններու շուրջ հաւաքուեցան մանկապարտեզի փոքրիկներէն մինչեւ երկրորդական դասարաններուն ուսանողները:



Ձախին՝ աշակերտները սեղաններուն շուրջ. աջի նկարը՝ Ծնողաուսուցչականի օրուան կամատրներուն կազմը:



Հինգշաբթի, 25 Նոյեմբերին Արշակ Տիգրանեան վարժարանի սաները ինչպէս ամէն տարի, այս տարի եւս իրենց ներդրումը ունեցան “Հայաստան Համահայկական Հիմնադրամին”: Աշխուժօրէն մասնակցելով դրամահաւաքին, անոնք իրենց հաւաքած 4,500 տոլարի գումարով մը նպաստեցին Արցախի վերաշինութեան գործին:



Ուսանողական Խորհուրդի ներկայացուցիչ աշակերտները. ձախին՝ Օրդ. Ալվարդ Ուզունեան, աջին՝ Ծնողատուուցչական Կազմակերպութեան գանձապահ Պրն. Արմէն Մխսեան:

Հինգշաբթի, 9 Դեկտեմբերին, վարժարանի սաները իրենց ամանօրեայ հանդէսը ներկայացուցին Առաջնորդարանի սրահին մէջ՝ ներկայութեամբ բոլոր հայկական վարժարաններու միջնակարգի աշակերտութեան: Արշակ Տիգրանեան վարժարանը այս անգամ եւս փայլեցաւ երգի, պարի, սամուրի մէջ իր շնորհալի աշակերտներով: Վարժարանիս բազմավաստակ ուսուցիչներու՝ Պրն. Կոմիտաս Քէշիշեանի, Պրն. Ռոպերթ Առաքելեանի եւ Տիկ. Էմմա Ունրոյեանի գլխաւորութեամբ հրաշալի յայտագիր մը նուիրեցին իրենց հասակակից հայ մանուկներուն:



Տեսարան “Կենդանիներուն Բողոքը” երաժշտական ներկայացումէն:



Աշակերտական երգչախումբը կը կատարէ Պրն. Կոմիտաս Քէշիշեանի ղեկավարութեամբ:

Ուրբաթ, 17 Դեկտեմբերին, վարժարանիս Գարապեան սրահին մէջ, 12-րդ դասարանի աշակերտները “ձուածեղով երշիկ”ի (իրենց ձեռքով պատրաստած) յատուկ հիւրասիրութիւն կազմակերպելու էին: Յատուկ հիւրասիրութեան յատուկ հրաւիրեալներն էին դպրոցի հոգաբարձութեան, տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին այն անդամները, որոնք “ճիշդ ժամուն, ճիշդ տեղն” էին՝ Գարապեան սրահը, ճաշի սեղանին շուրջ: Բախտատուներէն էին Հոգաբարձութեան ատենապետ Պրն. Գէորգ Մանտոսեան, տնօրէն Պրն. Վարդգէս Գուրուեան, ուսուցիչներէն Տիկ. Վերժինէ Յարութիւնեան, Օրդ. Ալվարդ Ուզունեան, Պրն. Վարդան Աբրահամեան, Պրն. Գրիգոր Սուքիասեան, Պրն. Ռիքարտո Ռոչա եւ ուրիշ “բախտատուներ”, որոնք պիտի չմոռնան ասարտականներուն “ձեռքի շնորհք”ին համը:



12-րդի ասարտականները իրենց հիւրերով . ձախտէն՝ Պրն. Վարդգէս Գուրուեան, Պրն. Գէորգ Մանտոսեան, Օրդ. Ալվարդ Ուզունեան. ետեւը, կեղդոնը՝ Պրն. Ռիքարտո Ռոչա. առջեւը աջէն՝ Տիկ. Վերժինէ Յարութիւնեան եւ Պր. Վարդան Աբրահամեան. կը լուսանկարէ (բնականաբար, ինչպէս միշտ, նկարին մէջ չերեւիր Պրն. Գրիգոր Սուքիասեան):

Ուրբաթ, 17 Դեկտեմբերին եօթներորդ դասարանի աշակերտները Օրիորդ Ալվարդ Ուզունեանի ղեկավարութեամբ պատրաստեցին «Քրիստոնեայ Հայաստան» վերնագիրը կրող ձեռնային աշխատանքներու ցուցահանդէսը: Յատկանշական էր, որ աշակերտները իրենց մտադասումները եւ ստեղծագործական երեսակայութիւնը միաձուլելով պատմական փաստերուն, մէջտեղ բերած էին իրայատուկ ցուցահանդէս մը: Իսկ ուսուցիչներէ կազմուած աչալուրջ դատական կազմը, որուն սիրայօժար կը մասնակցէր Հոգաբարձութեան ատենապետ Պրն. Ճորճ Մանոտեան, ուշի ուշով քննելէ ետք աշխատանքները, որոշեց մրցանակակիրները հետեւեալ ձեով. միաձայնութեամբ առաջին մրցանակը ստացաւ **Լիլիթ Շիշիկեանի** աշխատանքը, **Ալեքս Բասաֆիկեանի**, **Ռիթա Կարայեանի**, **Լիաննա Սուլթանեանի** աշխատանքները արժանացան երկրորդ մրցանակին, իսկ **Ազատուի Թագաւիթեան** եւ **Շաքէ Բալաջեան** տիրացան երրորդ մրցանակին:



Առաջին մրցանակին արժանացած Լիլիթ Շիշիկեանի աշխատանքը:



Չախէն՝ Բալանեան Շաքէ, Թագաւիթեան Ազատուի, Շիշիկեան Լիլիթ, Սուլթանեան Լիաննա, Կարայեան Ռիթա եւ Բասաֆիկեան Ալեքս:

Հինգշաբթի, 23 Դեկտեմբերին վարժարանիս աշակերտները ուղղուեցան Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի՝ առնելու Ս. Ծննդեան հաղորդութիւնը: Լուռ շարքերով, մանկապարտէզէն մինչեւ ասարական դասարանի աշակերտները, դասարան առ դասարան, իրաքանչիւր իր մօմը վառելէ ետք տեղատրուեցան լսելու օրուան խորհուրդը: Հայր Պարետ Ծ. վրդ. Երեցեանի եւ Տէր Մանուկ Ա. քին. Մարգարեանի կատարած Ս. Ծննդեան արարողութենէն ետք, աշակերտները ստացան հաղորդութիւնը: Ապա, վերադառնալով դպրոց, անոնք անցան իրենց դասարանային խրախճանքներուն: Երգեցին, պարեցին, ուրախացան եւ Նոր տարուան նուէրներ փոխանակեցին: Կէսօրին, Հայաստանի ձիւնոտ Արարատէն վերջապէս դպրոց հասաւ Չմեռ պապին՝ նուէրներով բեռնաւորուած՝ յատկապէս փոքրիկներուն համար: Ապա, աշակերտները մեկնեցան Նոր տարուան եւ Ս. Ծննդեան արձակուրդին՝ նոր տարիին վերադառնալու համար դպրոց:



Հաղորդութեան պահուն:



Վերջապէս Չմեռ պապին հասաւ...

ՄԱՐԶԱԿԱՆ

Երեքշաբթի, 19 Հոկտեմբերին վարժարան այցելեցին “Մխիթարեան” վարժարանի մարզիկները: Անոնց պասքեթպոլի եւ ֆութպոլի խումբերը բարեկամական մրցումներ ունեցան մեր վարժարանի պասքեթպոլի եւ ֆութպոլի խումբերուն դէմ: Երկու խաղերուն ալ մեր մարզիկները յաղթեցին: Կէսօրին մեր հիւրերը եղան վարժարանիս ճաշի հիւրը:



“Մխիթարեան”-ի եւ մեր պասքեթպոլիստներուն խառն խումբին կազմը խաղէն առաջ շրջապատուած իրենց մարզիչ մարզիչներով:

Վարի նկարին մէջ մեր փոքրիկ ֆութպոլիստներուն խումբը Մարգական Յանճնախումբի անդամ ծնողներուն հետ. ձախէն՝ Պրն. Սեդրակ Շիշիկեան, Յակոբ Մազումեան, Կարէն Տայեան եւ Մինաս Բամբալեան:



“Մխիթարեան” վարժարանի ղեկավարները այդ օրը եղան ճաշի մեր հիւրերը :



Այս տարուայ Տեպտեմբերէն ԹՄՍ Արշակ Տիգրանեան վարժարանի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով մեր պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբը մասնակցեցաւ Junior Varsity Basketball-ի Mulholland league եւ CIF-ի մրցաշարքին: Մեր տղաքը արդէն շոշափելի յաղթանակներ սկսան սպահովել եւ մեր խաղողներէն Յակոբ Կարապետեան (11-րդ դասարան) արդէն կը ճանչցուի որպէս մրցաշարքի MVP խաղացողը: Անհամբեր կը սպասենք 2011-ին, երբ մրցաշարքը պիտի շարունակուի եւ մեր խումբը վստահաբար պիտի գրաւէ պատուաւոր դիրք:

Նկարին մէջ. ոտքի ձախէն Ալեքս Դարիպեան, Շոն Դուկասեան, Դաւիթ Անանեան, մարզիչ Ռուտի Ռամէի, Յովհաննէս Մուփիկեան, Յակոբ Կարապետեան. նստած ձախէն՝ Շոն Մկրեան, Մտեփան Դարաքճեան, Խաչիկ Հալաճեան եւ Արթուր Կարապետեան: